

**Այն կապեպ  
(Հստոնացի Բանաստեղծ)**

**ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ**

Ես ժայլում էի, ինչպէս  
մեռեալներն են ժայլում...  
ՑՐԱՆՑ ՎԵՐՑԵԼ

Քայլիս թերեւ էր,  
ինչպէս լինում են ժայլերը ոգու,  
Քայլիս թերեւ էր, երբ սկսեցի վերեւ բարձրանալ,  
Ես չէի զգում, թէ ինչպէս էի ոտքերս պոկում,  
Սիրտ չէի անում  
Թելուել իմ ուղուց  
Կամ հանգստանալ:

Ես գնում էի մեռեալի նման,  
Քայլում էի վեր,  
Մինչեւ որ մնաց այն հսկայական ժաղաքը ցածում,  
Քայլիս թերեւ էր, կարծես թէ մի զոյգ հրեղէն թեւեր  
Տանում էին ինձ... բայց ես ողջ էի  
Ու ինքս էի երկինք թեւածում:

Ելնում էի ես, հայեացիս դէպի բարձունքը յառած,  
Եւ իմ դէմ փոռուեց ժարէ գորշագոյն մի հրապարակ,  
Ոտք դրի ժարին,  
Ու յառնեց յանկարծ աչքերիս առաջ  
Քարէ մի ծաղիկ.  
Հսկայ մի ծաղիկ ու մէջը՝ կրակ...

Ու ես այդ հսկայ ծաղիկ մէջ մտայ...  
Կանգնեցի ես լուռ:  
Հայեացիս միջով ինչ-որ թափանցիկ ալիքներ անցան:  
Ես խոնարհուեցի յետոյ պղնձէ օչախին այն հուր:  
Եւ իմ ականջին հասաւ խուլ մի ծայն...

Չայնն այդ հնչում էր,  
Ոգեկոչում էր ժարերի տակից,  
Եւ ամենեցուն յուշում էր ասես, ծայրէծայր զանգում,  
Որ նրանց, ովքեր ընկել են մի օր  
Սուր ու գնդակից,  
Անհնարին է մոռանալ կեանքում:

Եւ ես խոնարհուած խորհում էի լուռ՝  
Նահատակներն այս պիտի որ ապրեն աւելի երկար,  
Քանզի իմ մէջ են, ո՞ւ մէջ են նրանք  
Իրրեւ յուշ ու հուր:  
Իսկ յուշն ու հուրը  
Անհնարին է անել սրահար:

Լոյսը դողում էր ժարերի վրայ... իսկ ես ողջ էի  
Եւ ողջ առաւել ժան մէկ ժամ առաջ,  
Առաւել տոկուն:  
Եւ ժայլիս սակայն թեթեւ էր այնպէս  
Եւ այնպէս լոյն,  
Ինչպէս լինում են ժայլերը ոգու...

Թարգմ.՝ Վահագն Դաւթեանի